Բանուծի համաքարկման աշխատանքներն ավելի լաւ հիմքերի վրա դնելու, ինչպէս նաեւ հոսունութեան դեմ պայքարն արդյունավետ դարձնելու և մանավանդ համաքարկման դժուր ծախսերը կրճատելու տեսակետից անհրաժեշտ է համաքարկման աշխատանքները կատարել տնտեսաշարի բրիգադների միջոցով: Այդ բրիգադներն իրեն ավելի շահագրգռված մարմիններ, կհոգան վոչ միայն իրենց մեջ ընդգրկված բանվորների քանակի մասին, այլ նրանք մեծ գործ կկատարեն նոր ընդգրկված բանվորների վորակավորման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հարցում: Այս վորձն արդեն կիրառւում է Խ. Միութեան մեջ: «Կրասնի Պուտիլովցի», «Սե Կարելը» և Լենինգրադի այլ ձեռնարկութեանները հսկայական արդյունքներ են ստացել: Այս ձեռք ամենալաւ միջոցներից մեկը կլինի, նաեւ այդ նոր բանվորներին հարվածային բրիգադներին նետուղիորդմով վարակելու, մանր սեփականատիրական տրամադրութեանների, թուլամորթութեան ու պոկողականութեան դեմ հաջող պայքար մղելու և այսպիսով, նրանց արագորեն պրո-

լետարական կաթալում կոփելու, արտադրութեան բարձրացման ու վորակավորման միջոցով լաւ հարվածայիններ ուստրատելու տեսակետից:

Արտադնացութեան վերաբերյալ վորոշումները կոլտնտեսութեաններում մասսայականացնելու, ինչպէս և բանվորական ամբիւրջում ուժը դուռ բերելու գործում ամենից շատ չեւտը պիտի դնել իրենց՝ կոլտնտեսութեանների վարչութեաններին և նրանց շրջանային մարմիններին վրա: Այդ աշխատանքը նրանց անմիջական գործն է: Նրանք ամենից շատ պարտականութեաններ ունեն կատարելու այդ հարցում: Դժբախտաբար իրականութեան մեջ մենք հակառակն ենք տեսնում: 1931 թ. հունվար ամսից մինչև մայիս կոլտնտեսութեաններում աշխատող ընկերները միշտ հակաճառում եյին, վոր «դժվար է, անհնարին է կոլտնտեսութեաններից բանվորներս բերել: Ընդհակառակը՝ պետք է կոլտնտեսութեաններին ոգնել և այլն»: Դեռ մինչև այժմ եւ շատ կոլտնտեսութեաններում նկատվում են այդ կոնսերվատիվ անթույլատրելի յերեւույթները: Ասել, թե այս հարցում տեղերը ժամանակին նախադատարարված չեն, այդ սխալ կլինի: Դեռ 1930 թ. դեկտեմբերի 18-ին հրատարակեց Հայկենտգործ կոմի վորոշումը և 1931 թ. հունվարի 1-ին Ալթոգլկոմատի հրահանգը՝ արտադնացների, կոլտնտեսութեանների բանուծի ամբիւրջուկը կազմակերպված ձեով մեր սոցիալարարութեանը տրամադրելու մասին: Դրանից հետո հրատարակեց Ալթոգլկոմատի և կոլտնտեսութեանների դիմումը «Խորհրդային Հայաստանում»: Բաղական խոշոր ուղեւորով պրակտիկ աշխատանքներ են կատարվել այդ ուղղութեամբ: Անվերջ հրահանգների, հեռագրական կարգադրութեանների, կենդանի կապի միջոցով հրահրվել է դրա անհրաժեշտութեանը և այլն, սակայն արդյունքները շատ աննշան են: Վորպետի կոլտնտեսացն այս հարցում զգալի շրջագործ առաջ բերի իր աշխատանքներում, հատուկ վորոշումներ են ընդունել կենտկոմը և Ժողկոմխորը: Այդ վորոշումները դեռ լրիւ չեն կրաւած:

Շրջանային և գյուղական կոլտնտեսութեաններն ընդգրկում են հսկայական ցանց, վորոնք քանակապես և վորակապես բաւական ճկուն ապարատներ են, կոնկրետ վեկավորման, հետեողական աշխատանքների միջոցով կա-

րող են ուժեղ չըջադարձ առաջ բերել: Ինքը, կոլտնտեսութեան ղեկավարութեանն է, վոր ամենից չատ և հեշտ կերպով կարող է տեսնել իր տնտեսութեան բանութի ավելցուկը, նա յե, վոր աշխատանքի կազմակերպումը լավ կ'իրադեցուի, պետք է կոլտնտեսականներէից չատ արտադնացներ հայտարարել, ոգնի ու աջակցի մեր արդյունաբերութեանը:

Արտադնաց կոլտնտեսականներին և իրենց վարչութեաններին միջև գոյութեան ունեյին նշուածական, աշխատանքային փոխհարաբերութեաններին խճճված պայմաններ, վորոնք նույնպէս յերկար ժամանակ խոչընդոտ եյին հանդիսացել և վնասել բանութի հաւաքարկման աշխատանքներին: Այս դժվարութեաններն արդեն վերացվում են Համախոլութեանական կենտրոնի և Ժողովրդի 1931 թ. հունիսի 30-ի վորոշմամբ, վոր կարգավորում է կոլտնտեսութեաններին, նրանց արտադնացներին ու տնտեսավարներին աշխատանքային փոխհարաբերութեանները և, վոր ամենազգլխավորն է, այդ վորոշմամբ արտադնաց կոլտնտեսականներին տրվում են մի չարք արտոնութեաններ:

Արտադնացներին արդյունաբերութեանն ամրացնելու աշխատանքներին խոչոր չափով վնասում է վորոշ տնտեսավարների անխնամ ու սառնասիրտ վերաբերմունքը: Ինչպէս նոր ընդունված արտադնացների կուլտուր-կենցաղային ու կոմունալ կարիքների վատ սպասարկումը, նույնպէս և մեր կոոպերատիվ մարմինների անկանոն սպասարկումը վնասում են այդ աշխատանքներին:

Ծնորհիվ մեր արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան աննախընթաց ուժեղ զարգացման և բանութի պահանջի ավելացման, բանութի հաւաքարկման—մատակարարման աշխատանքները դարձել են որվա մարտական խնդիր: Այդ պահանջում և ուղղակի արտաշարժութեան:

Պետք է վերջ տալ այս հարցում յեղած անտարբեր և դանդաղկոտ վերաբերմունքին և ե'լ ավելի արագութեամբ կատարել այդ ուղղութեամբ գոյութեան ունեցող և հետագայում հրատարակվելիք վորոշումներն ու հրահանգները:

Վորպեսզի մեզ հաջողի արագ և հիմնովին վերացնել այն բոլոր թերութեաններն ու սխալները, վոր կան բանութի հաւաքարկման և մատակարարման ասպարիզում և այդ աշխատանքներն առաջ տանել մեր տնտեսութեան տեմպերի հետ,

անրաժեշտ է, վոր մեր տնտեսավարներն ու աշխատողներն ավելի ուժեղ աշխատանք կատարեն և, միաժամանակ, մեր տեղական կուս-և պրոֆեսիոնալ կազմակերպութեանները հետևողական ղեկավարութեան և ոգնութեան ցույց տան:

ԿԱՆԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԱՓՈՎ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԺՈՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր սոցիալիստական շինարարութեան բուռն ու աննախընթաց վերելքին դուզնեթաց, քանի դնում, այնքան ավելի վճռական, ավելի մարտական է դառնում կանանց ներդրումն հարցը մեր ժողտնտեսութեան մեջ: Կանանց հարցն առավել ևս ակուտալ բնույթ է ստանում քանի դեռ ընդարձակվում է բանութի պակասութեանը: Կանայք, իբրև բանութ, հանդիսանում են անսպառ ռեզերվներ:

Կապիտալիստական յերկրներում կ'ինը դեռ ճորտի ու ստրկի դերումն է: Այնտեղ նա վայրագ կերպով ճնշվում է իբրև ընտանիքի ու հասարակութեան անհավասար անդամ: Արդյունաբերութեան մեջ՝ կարիքի զոհ դարձած, կիսաքաղձ դրութեամբ նա չհազարժուում է, հավելյալ արժեք է արտադրում կապիտալիստի համար և ողորդորդվում է իբրև բանվորի աշխատավարձի իջեցման մի միջոց, մանավանդ ներկա մոմենտում, յերբ այնտեղ տնտեսական ճգնաժամը խորանում է և դրա հետևանքով կ'ինը կարիքից ստիպված ընկնում է պրատիտուցիայի, սոցիալական այդ չարիքի դիրկը:

Մեզ մոտ պայմաններն այլ են: Հսկումքերյան հեղափոխութեանից սկսած՝ թորհրդային Միութեան մեջ, առաջին անգամ պատմութեան մեջ կ'ինը ազատագրվեց և հավասար իրավունքների տեր դարձավ: Նա ազատագրվեց թե տնտեսական-կապանքներից ու ստրկութեանից և թե չհազարժուում է մից ու պրոստիտուցիայից: Մեզ մոտ կ'ինը վարձու աշխատանքի դնում է մոշ թե աղքատութեանից և քաղցից ստիպված, այլ նա մտնում է աշխատանքի կուլտուր կենցաղային ավելի լավ պայմաններ ձեռք բերելու համար և, վոր գլխավորն ու ամենակարեւորն է, նա դրանով մասնակցում է թորհրդային Միութեան սոցիալիստական շինարարութեան մեծ գործին, վորպեսզի առաջ մղի ամբողջ աշխարհի պրոլետար

րեաթի պայքարը: Կար ժամանակ, յերբ մի շարք զործազուկներ» բողոքում եյին այս կամ այն աշխատանքի մեջ ամուսիններ կամ մեկ ընտանիքից 2 աշխատող լինելու դեպքում, թե պետք ե 2-ից մեկին դործից հեռացնել և այլն: Իսկ այժմ պատկերն այլ ե. մեր բանվոր ծառայողները ընտանիքի աշխատունակ անդամները խոշոր մասը աշխատում ե զանազան ասպարեզներում:

Ներկայումս մեր ժողտնտեսության զարգացման տեմպերն են հրամայականորեն սլահանջ դնում, վոր ամբողջ աշխատավորությունն իր ընտանիքի աշխատունակ անդամներին, հատկապես կանանց, դնի աշխատանքի և այդպիսով միայն որենքով, այլև հավասարություն կյանքում, միաժամանակ ուժեղացնի իր բյուջեն:

Ահա այդ դրությունից, կանանց դիտակցական վերաբերմունքից յեղնելով, մեզ մոտ լայն հեռանկարներ կան կանանց ժողտնտեսության մեջ ներգրավելու համար:

«Որենքով հավասարությունը դեռ չի նշանակում հավասարություն կյանքում: Մեզ հարկավոր ե, վոր կին աշխատավորուհին ձեռք բերի հավասարություն վոչ միայն որենքով, այլև հավասարություն կյանքում, տղամարդ—աշխատավորի հետ: Դրա համար հարկավոր ե, վոր աշխատավորուհիներն ավելի և ավելի շատ մասնակցություն ունենան հասարակության ձեռնարկությունների կառավարման և պետության կառավարման գործում»:

Լենինն այս պատգամները մեզ տվել ե դեռ 1920 թ.: Մինչև այժմ բառական խոշոր աշխատանք ե կատարված Խորհրդային Միության մեջ: Կանանց իրավակենցադային հարցերի բարելավման, նրանց մեր արդյունաբերության և պետության կառավարման գործում մասսայականորեն ընդգրկելու ընդառնություն և այլն: Այս ուղղությամբ մեր գլխավոր նվաճումներից մեկն այն ե, վոր աճում ե կանանց տեղիսը մեր ղեկավար խորհրդային, պրոֆեսիոնալ, տնտեսական և այլ մարմիններում, յերկրորդն այն ե, վոր մեր բարձրագույն գալորցներում և զանազան կուրսերում չտեսնված չափով աճում ե կանանց թիվը և, յերրորդ՝ մեր արդյունաբերության մեջ տարեցտարի խոշոր չափերով աճում ե բանվորուհիների ընդգրկումը: Յեթե 1929 թվի հոկտեմբերին Խորհրդային Միության մեջ վարձու աշխատող կանանց թիվը

կազմում եր 2.271.000, 1930 թ. հունվարին հասնում ե 3.594.000-ի, իսկ 1932 թվին հասնելու յե մինչև 4.921.000:

Լենինի պատգամները լրիվ կենսագործելու և մեր սոցիալիստական շինարարության մեծ պահանջը բավարարելու տեսակետից մեր նվաճումները դեռևս աննշան են: Այժմ, յերբ մենք ձեռնարկել ենք մեր սոցիալիստական յերկրի հիմնական վերակառուցման և գործադրկությունն իսպառ վերացրել ենք, հնգամյակի յերրորդ՝ վճռական տարվա մեր բուռն ու աննախընթաց վերելքին զուգընթաց, պիտի կենսագործենք Լենինյան այս պատգամները, հիմնականում լուծելով կանանց ներգրավման խնդիրը՝ նրանց մաքսիմալ չափով ներգրավելով մեր ամբողջ սոցիալարարության ղեկավարման ու սոցիալիզմի կառուցման գործին:

Որակարգի հարց պիտի դարձնել և որվա լողունդ՝ բոլոր աշխատավորուհիներին դուրս բերել ընտանիքից, հին կենցաղի պայմաններից ու ներգրավել ժողտնտեսության մեջ:

Խորհրդային Հայաստանում նույնպես զգալի աշխատանք ե կատարված կանանց սոցիալարարության ղեկավարման մասնակից դարձնելու համար: Յեթե 1923 թվին մեր ժողտնտեսության բոլոր ճյուղերում կանանց թիվը հասնում եր 3200-ի, ապա 1930 թվին արդեն հասնում ե, 9700-ի, իսկ 1931 թվին հասնելու յե մինչև 20 հազարի:

Յեղնելով բանուժի մեծ պահանջից և կանանց արդյունաբերության մեջ ընդգրկելու դրույթից՝ ՀՍՖՍՀ Աշխատողու մարտ 1931 թվի ապրիլի 4-ի վորոշմամբ հրատարակեց 34 պրոֆեսիաների ցանկ, վորոնց մեջ բացառապես պետք ե աշխատեն կանայք՝ նոր աշխատանքի ընդունվելու և տղամարդկանց փոխարինելու միջոցով: Առ 1931 թվի հոկտեմբեր, նախնական տվյալներով հաջողվել ե ընդգրկել մեր սոցիալարարության մեջ 8974 կին: Կանանց ներգրավման, հատկապես Աշխատողու մարտի վորոշման կատարման խնդրում, դեռ քիչ շոշափելի արդյունքների յենք հասել:

Կանանց ներգրավման հարցում բոլոր որչեղտիվ պայմանները մեզ մոտ կան, միայն հարկավոր ե այս վճռական նշանակություն ունեցող հարցի շուրջը ստեղծել լայն հասարակայնություն և յեռանդուն աշխատանք: Մյուս կող-

միջ՝ անհրաժեշտ է բայլելիկյան անողոք հարվածների տակ առնել դեռևս գոյություն ունեցող կոնսերվատիվները և բոլոր տեսակի թերահավատ ու քայլադյուր վերաբերմունքը դեպի այս կարևորագույն գործը: Դեռ կան մարդիկ, վորոնք գտնում են, վոր թե կինը չի կարող հանրագուտ աշխատանք կատարել, տղամարդն անխոխարինելի յե և այլն: Նման տրամադրությունները վերջին հաշիվով կուսակցության հիմնական դժի աղավաղումն են և ուղղորտունիզմ՝ պրակտիկայում: Ընդհակառակն՝ իրականություն տվյալներն ապացուցում են, վոր կինը մեծապես է ընդունակ և փոխարինելու տղամարդուն: Կինը տղամարդուց հետ չի մնում պարտաճանաչ աշխատելու և ավելի զիսցիպլինար լինելու տեսակետից: Նա նույնպես դառնում է մեռյալ աշխատող և, վերջապես, նա դեպի պետական և հասարակական գույքը խնամքով վերաբերվելու հարցում հետ չի մնում: Վորպեսզի կանանց արտադրության մեջ ընդգրկելու խնդիրն ավելի դժարանա, մեզ մնում է նրանց պատրաստման, վերապատրաստման աշխատանքները դարձնել մեր ուղղորտության առանցքը:

Յեղնելով գոյություն ունեցող դրություններից, Աշխատող կոմստը հատուկ ծրագիր է կազմել կանանց մեր ժողովրդականության մեջ ներգրավելու համար: Այդ պլանով նախատեսված է 1931 թ. ընդգրկել 11.140 հոգի, վորից նախատեսվում է արդյունաբերության մեջ ընդգրկել 2.715 հոգի, ավտոտրանսպորտում և ժողկապում՝ 111 հոգի, խորհրդային անտեսություններում՝ 2.880 հոգի, շինարարության մեջ՝ 772 հոգի, ժողաննդի և կոոպերացիայի ապարատներում՝ 1514 հոգի, ֆարգործաշրջաններում՝ 1037 հոգի, գրասենյակային և սպասարկող կազմում՝ 1499 հոգի և այլն: Ի դեմս Անդրաշխող կոմստի նախատեսված 5965 հոգու պլանի, այս հանդիպական պլանը մեր պայմաններում միանգամայն ռեալ է և իրագործվում է: Սակայն մենք չպետք է բավարարվենք նրանով, վոր ապահովված է այդ պլանի կատարումը, այլ մենք պետք է այդ ուղղությամբ հարատև և սխտեմատիկ աշխատանք կատարենք: Մեր կուս. և ԼԿՅՆՄ բջիջները պետք է անհրաժեշտ ուղղորտություն տվիրեն այդ աշխատանքներին: Հսկայական դեր ունեն պրոֆկոնկտիկներն այդ պլանների քննության, հաղիպական պլանների առաջադրելու

և կանանց իրենց հիմնարկ-ձեռարկություններում գործնականացնելու ընդգրկելու մեջ: Ավելի քան խոշոր դեր ունեն կանանց կենցաղը բարելավող կազմակերպությունները, վորանք բավական դանդաղ են շարժվում: Շատ դեպքերում նրանք բավարարվում են ընդհանուր զեկուցումներ լսելով: Պետք է կոնկրետ և դործնական աշակցություն ցույց տալ այդ աշխատանքներին: Ամենից շատ շահագրգռված են և պարտավոր են հարկ յեղած աշխատանքները կատարել մեր անտեսական մարմիններն այդ չափաչանց լուրջ ասպարիզում: Նրանք պետք է իրենց հավաքարկման ապարատներում հատուկ կին հավաքարկողներ պահեն և մաքսիմալ յեռանդ դործադրեն, վոր այդ պլանները փոչ միայն կատարվեն, այլև գերակատարվեն ու վորակավորվեն ընդգրկված կանայք: Նրանց ապարատները հսկայական դեր ունեն այդ աշխատանքները տեխնիկապես և կազմակերպչորեն կարգավորելու տեսակետից:

Կանանց ներգրավման խնդրում առնալուրջ խոչընդոտ, նրանց կուլտուր-կենցաղային կարիքների բավարարման հարցն է: Մեր բոլոր համապատասխան մարմինները պետք է իրենց ջանքերը լարեն և միջոցների դիմեն այդ դժվարությունները հաղթահարելու համար: Հրամայականն ու հիմնականը կանանց կենցաղային կարիքները կանոնավորելու հարցն է՝ մսուրների, մանկապարտեզների, հրտադրականների ինչպես նաև ժողաննդի և նման այլ աշխատանքների կազմակերպման հարցը, վորոնք մեզինք պահանջում են նյութական զոհողությունների առաջ կանգ չառնել, կատարել ավելին, քան որչեկտիվ հնարավորություններն ու մեր ֆինանսական միջոցները թույլ են տալիս: Տնտեսական մարմինների համար պարտադիր պետք է դարձնել մարտական պատվեր՝ վորտեղ աշխատում են 50-100 կին, նրանց ապահովել հիշյալ ձեռնարկումներով:

Կառվածից դուրս է, վոր մեր բոլոր շահագրգռված մարմինները և մեր ամբողջ ինֆրադային հասարակայնությունները կիպ մոտենալով տվյալ աշխատանքներին, հարմարացնելով իրենց աշխատանքի բոլոր ողակները կանանց ներգրավման հարցի լուծմանը, ընդունակ կլինեն մեր նախատեսած պլանները գերակատարել հանդիպական պլաններով:

Այն բոլոր միջոցառումները, վոր մինչև այժմ կատար-

ված են, կամ նախատեսված են ձեռնարկելու հետագա տարիներում, իրենց ամբողջ ելույթյամբ չեն կանոնավորի մեր սոցիալաբարութեան արագաճող զարգացման կարիքներից բխած բանութի հարցը, հատկապես չեն լուծի կանանց արդյունաբերութեան մեջ հիմնովին ներգրավելու խնդիրը:

Մեր արդյունաբերութեան ինդուստրացումը, նրա տեխնիկական առաջընթացը, ինչպես նաև գյուղատնտեսութեան մեքենայացումն ու համատարած կոլեկտիվացումը, վորը բանութի վորոշ խնայողութեան եւ առաջ բերում, այդ բոլորը դեռ քիչ են: Քաղաքի արդյունաբերութեան ցանցի լայնացումը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը եւ նրա գործարանային ու արհեստանոցային կյանքի աճումը կկլարեն բանութի այդ ավելցուկն ամբողջութեամբ: Դեռ առաջիկա մի քանի տարիներում ձեռքի աշխատանքը խոշոր տեղ եւ գրավելու: Յեկնելով նման դրութեանը, կարելի չե յեղբակացնել, վոր գյուղը միայն իր սղամարդ արտադնացնելով, բանութի ավելցուկի օգեբերվներով արդյունաբերութեանը բավարարել չի կարող: Մեր ամբողջ սոցիալիստական շինարարութեանը բանութով ապահովելու հիմնական աղբյուրներն են մեկը մոտակա տարիներում հանդիսանալու յեն կանայք թե քաղաքում եւ թե հատկապես գյուղում: Այս տեսակետից յեկնելով, պետք ե ավելի հեռուն մտածել: Դեռ ես գործադրկութեան լիկվիդացիայի առաջին տարին ե, եւ անտեսավարներից վոմանք հինգ-առաք բանվորի կարիքը հոգալու համար գլխապտույտի մեջ են ընկնում: Յեվ իրոք, այդ ուղղութեամբ վորոշ գծավորութեաններ կան, վորոնց հաղթահարելու ձեռնն ու մեթոդները դեռ մեղմից շատերը լավ չեն յուրացրել: Մեր տեմպերը մեղմից պահանջում են հիմնական բարեփոխում առաջ բերել մեր կենցաղի, հատկապես կանանց կենցաղի մեջ: Անշուշտ, այս գիտական հարց ե եւ կարոտ ե լայն յուսաբանման, սակայն իրականութեան ու յեկնութեանն այնքան են հասունացել, վոր իրենք են այդ պահանջը դնում:

Այժմ մեր բանվորների գերադանց մասը իր առօրյա կյանքում, ընտանիքում ձգտում ե դեպի նոր կենցաղը: Անհրաժեշտ ե գիմել կոնկրետ քայլերի, անհրաժեշտ ե լուսարանութեան, անհրաժեշտ ե այս չափադանց լուրջ ու կարեւորագույն խնդրի շուրջը լայն հաստրակայնութեան ստեղ-

ծել: Այստեղ մեծ դեր ունի մեր մամուլը: Միաժամանակ պետք ե որվա խնդիր դարձնել դործնական քայլերի դիմելն այս ուղղութեամբ՝ մեր ամբողջ աշխատավորութեան կենցաղում հիմնական շրջադարձ առաջ բերելու, մեր կենցաղը հիմնովին վերակառուցելու համար՝ հարմարեցնելով մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման պահանջներին: Խորհրդային Միութեան շատ բանվորական վայրերում արդեն հսկայական չափեր են ընդունել բանվորական արտադրական կոմունաները եւ կոլեկտիվները: Մեղ մոտ այդ սկսել ե կենտրոտիլ բանվորութեանը: Պետք ե քաջալիբել ե խորացնել այդ շարժումը:

Ժողտնտեսութեան մեջ կանանց մասնայորեն ներգրավելու ե նրանց վերջնականապես բուրժուական-մասնավոր սեփականատիրական սովորութեաններն, կենցաղի ալանդակ մնացորդներից աղատագրելու հիմնական ե վճռական նախադրարն ե հսկայական բանակներ կազմող մեր աշխատավորական լայն խավերի ներգրավումը դեպի կոլեկտիվ կյանքը, դեպի աշխատավորութեան հանրային սպասարկումը: Այս ճանապարհով ե, վոր մենք վերջնականապես կարող կլինենք կնոջն ազատել լվացքից, պրիմուսից, յերեխաներ խնամելուց ե անից ու նրան վերջնականապես ներգրավել մեր սոցիալիստական շինարարութեան մեջ: Այս կերպ միայն կլինի իրոք աղամարդուն համաար ուժ կղանա: Կոլեկտիվ կյանք ստեղծելու դեպքում հիմնական նշանակութեան ունի նաև այն, վոր հսկայական միջոցների, մեքենաների խնայողութեան առաջ կգա, վորի եֆեկտը մեծ ե:

Յեթե մեր արհմիութեաններն ու բնակոպերացիան ձեռնարկեն անհրաժեշտ բացատրական ու կազմակերպչական աշխատանքների, նրանք անշուշտ մեծ հաջողութեաններ ձեռք կբերեն: Նույնիսկ ամիսների ընթացքում կարելի չե այս ուղղութեամբ չոչափելի արդյունքների հասնել: Նույնիսկ բնակչիկոպերացիայի գծով ներկայումս կառուցված ե կառուցվելիք շենքերը կարելի չե հարմարեցնել կոլեկտիվ կյանքի: Մի թե Յերենանում «Խնտերնացիոնալ» կամ «Քլեյ» շենքերում չի կարելի նման բանվորական կոլեկտիվներ կազմակերպել: Կարծում ենք, վոր այս ուղղութեամբ ձգտողներ, բանվորական խմբեր ու ծառայողներ կլինեն, վորոնք համաձայն կլինեն 50-100 ընտանիքով իրենց ընտանիական

մեկուսի, ինքնահոս ու անանտեսարար ծախսերը կենտրոնացնել և կառավարվել տնտեսավարական հիմունքներով, վոր ավելի դյուրին, նպատակովոր ու անդաբար կլինի և վոր զլիսավորն է՝ դրա հետևանքով հսկայական թիվով կին աշխատավորուհիները կարելի կլինի ներգրավել արդյունաբերություն մեջ: Կամ միթե՝ չի կարելի նման դեպքերում մի շնափեց մյուսը տեղափոխություն կատարել և առաջնություն տալ դեպի հանրային սպասարկման ձգտողները: Ժամանակն է, վոր մեր բոլոր շահագրգռված կազմակերպությունները կանանց արդյունաբերության մեջ ներգրավելու անհրաժեշտությունը իրենց ուշադրության առանցքը դարձնեն կանացի կենցաղի վերակառուցման խնդիրը, այդ ուղիով ժամանակն է, այժմ մեր կատարած ձեռնարկումները պետք է համարել միևնույն և գիտնել ավելի միասնական, ավելի զորմոտական քայլերի:

Կանանց ներգրավելու հետ կապված հարցերը, լինեն դրանք կուլտուր-կենցաղային կարիքների թե ալ հարցեր, կլուծվեն այնպես, ինչպես մենք հաղթահարել ենք մեր անցած ժամանակաշրջանի բոլոր դժվարությունները: Այս խնդրում նույնպես Սորհրդային Հայաստանի բանվորությունը կորհրդային Միությունը պրոլետարիատի հետ միասին լինելույն պատգամներն արագ և լրիվ կենսագործելով՝ իրենք՝ կատեգորիալապես ստեղծագործող ու կատարելագործող միասնական բանակ:

ԲԱՆՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հնգամյա պլանի կատարման ու զերակատարման նախագրյալներին մեկը կադրերի պատրաստման խնդիրն է, վորի մեջ առանձնահատուկ տեղ է դրավում վորակյալ բանուժի պատրաստման հարցը: Այժմ առավել ևս լուրջ բնույթ է ստանում բանուժի պատրաստման ու վերապատրաստման հարցը, քանի վոր գործադրվողություն ամբողջովին լիկվիդացիայի յե յենթարկվել, մանավանդ բարդացել են մեր արտադրության պրոցեսները, քանի վոր մեր ամբողջ ժողտնտեսությունը յենթարկվում է նաև տեխնիկական վերա-

կառուցման: Այլևս բանուժի խնդիրը ինքնահոսի կարգով չի կարող բավարարել մեր ժողտնտեսությանը՝ Հարկավոր է զբաղված բանուժը վորակավորել, վերապատրաստել և, միաժամանակ, յեռանդուն աշխատանքի միջոցով աշխատավորական նոր դանդաճներից հավաքակել և պատրաստել բանվորական նոր կադրեր: Մեզանից շատերը, հատկապես տնտեսավարները զեռ անհրաժեշտ չափով կիպ չեն մոտեցել այդ չափազանց լուրջ աշխատանքներին: Դեռ նախկին ինքնահոս դրուժյունը տիրում է մեր շատ տնտեսավարների շրջանում: Շատ քիչ է մտածված-զբաղված բանուժի ռացիոնալ ուղտադործման, աշխատանքի մեխանիզացիայի և սոհասարակ աշխատանքի լավ կազմակերպման միջոցով աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու մասին:

Բացի բանուժի այն հիմնական ձևերից, վոր դոյուժյուն ունեն, անհրաժեշտ է նաև, վոր մեր տնտեսական մարմինները խիստ ծրագրային և հետևողական աշխատանքի միջոցով կիրառեն մոտացած բոլոր տեսակի ձևերը, ինչպես՝ և ՅԻՏ-ի մեթոդով կարճատև մասսայական կուրս-դասընթացները կազմակերպումը, բրիգադային, անհատական ամբույումները և այլն: Դժբախտաբար, այդ ուղղությամբ մեզ նում զեռ բավականին անտարբեր վերաբերմունք դոյուժյուն ունի:

Բանվորական ուժի պատրաստումը պետք է ընթանա յերկու հիմնական ուղղությամբ, առաջին՝ պատրաստել բանուժ արդյունաբերության համար, յերկրորդը՝ չինարտություն համար:

Բանուժի պլանավորման, պատրաստման ընդհանուր զեկավարությունն ու հսկողությունը, ինչպես նաև լուրջ գործնական ձեռնարկումներն այս առարկայում ընկած են Աշխոյդկոմատի մարմինների վրա: Թե վորքան են նրանք իրենց զերն արդարացրել այդ անհրաժեշտ աշխատանքի բնագավառում, դրա պատասխանն այնքան էլ դրական չէ: Աշխոյդկոմատի մարմինները զեռ, ինչպես հարկն է, չեն կարողացել իրենց աշխատանքներն այնպես վերակառուցել, վոր արմատապես ընդգրկեն, զեկավարեն ու աջակցեն այդ դործին:

Այս խնդրում պակաս չեն թերացել մեր տնտեսավարներից շատերը, վորոնք իրենց բանուժի վերապատրաստման

աշխատանքների և նրանց ընթացքի մասին համերաշխ, կոն-
տակտ չեն դործել աշխատանքի մարմինների հետ: Անդր-
աշխոթողի մասին 1981 թ. փետրվարի 15-ի և խորհրդային
Հայաստանի Աշխոթողի մասին նույն ամսի 24-ի վորոշում-
ների հիման վրա հատուկ ժամկետ էր տրված՝ մինչև մարտի
5-ը, վոր տնտեսական մարմինները ներկայացնեն իրենց
բանուժի պատրաստման պլանները: Այդ վորոշումները մինչև
այժմ մեզ չի հաջողվել լրիվ կատարել: Նման դեպքեր յեղակի
չեն: Այստեղից հետևություն կարելի յե անել, վոր նման
անորոշ դրուժյունը և դանդաղությունը նշանակում է
մի կողմից՝ չկատարել կուսակցության ղերեկալիները կամ,
ավելի ճիշտ՝ խեղաժյունը նրանց և աջ ուղորտունիստական
ինքնահոսի մասնել, և մյուս կողմից՝ չղիտակցել, վոր խոր-
հրդային դժով հրատարակվող վորոշումներն արտահայտու-
թյունն են կուսակցության հիմնական դժի: խորհրդային
դժով հրատարակվող վորոշումների դանդաղ կիրառումը
և յերբեմն ել մոռացության տալը վերջերս խրոնիկական
յերևույթ են դարձել ստորադաս մարմինների կողմից: ԲԳՏ
տեղական մարմինները պետք է ել ավելի սրեն իրենց ուշա-
դրությունն ու ամենախիստ պատասխանատվության հարցը
դնեն, իսկ դատախազությունը պետք է պարբերական ստու-
գումների միջոցով ավելի կոնկրետ ձեռնարկումների դիմի:

Արդյունաբերական բանուժի պատրաստման աշխատանք-
ները հիմնականում և անմիջականորեն կատարում են ի-
րենք՝ տնտեսական մարմինները: Նրանք ամենից շատ են պա-
տասխանատու այդ աշխատանքի համար: Արդյունաբերական
բանուժի պատրաստման հիմնական ձեռ հանդիսանում է
յերիտասարդությանը Փարզործաղարոցների միջոցով պատ-
րաստելը: Այս մասին 16-րդ կուս համագումարը ղերեկալի
է տվել:

Նկատի առնելով, վոր հնգամյակի զարդացման դե-
րպանց տեմպերի չնորհիվ վորակյալ բանուժի պահան-
ջն ընդարձակվել է, Փարզործաղարոցների և արդյու-
նաբերության մեջ յեղած պրոֆեսիոնալ դարոցների
այժմյան ցանցն ու կոնտինգենտը պետք է բավական
ընդարձակել:

Փարզործաղարոցների և արդյունաբերության մեջ յե-
ղած պրոֆեսիոնալ դարոցների ցանցի ու կոնտինգենտի լայ-

նացման և տեղացման մասին, 16-րդ համագումարի այդ
կարեորագույն մարտական ղերեկալիվ մեր տնտեսվարեն-
րը դեռ շատ վատ են կատարում: Պետք է վճռական միջոց-
ների դիմել դանդաղությունյանն ու թերահավատ վերաբեր-
մունքին վերջ տալու համար և յեռանդուն ջանք թափել՝ բա-
նուժի պատրաստման աշխատանքներին անհրաժեշտ տեմպ
հաղորդելու համար: Թե ինչպիսի պատկեր է տալիս Փար-
զործաղարոցների և շինաղարոցների դժով պատրաստվող
բանուժը, այդ յերևում է ՆՁ 2 աղյուսակից:

(Աղյուսակ ՆՁ 2 տես հաջորդ յերեսում)

Փարգործաւ, յիվ շինաւ, դարոցներ 1930 ր. աւան, 1931 ր. փետրարի յիվ աւան
հալափի պլաններ ու կատարեալ մասին

Գիւմար աւան	ՈՒՍՈՒՄՆ. ՀԻՄՆԱԿՆԵՐԻ ՏԻՊԵՐ ՅԵՎ ՀԱՎԱԳԻ ԺԱՄ- ԿԵՏՆԵՐ	Ըստ պլանի հալափի հալաք	Կատարված եւ հալաք		Այլ թվով հալաք	Արդիւն գործարար- նութիւն.
			Բացարձակ թվերով	Պլանի տո- կոսները		
Փարգործաւ. դարոցներ	1930 թ. աշնան հալաք	785	740	94,3	88	
	1931 թ. փետրարի հալաք	1670	1478	88,5	324	
	1931 թ. աշնան հալաք	2255	1685	70,3	324	118
Շինաւ. դարոց	1930 թ. աշնան հալաք	250	250	100,0	14	
	1931 թ. աշնան հալաք	265	143	54,0	31	9
	Իստակաւ. դարոց	620	310	50,0	33	1

Անշուշտ՝ անցյալի համեմատութեամբ այս ուղղութեամբ խոշոր հաջողութիւններ ունենալ: Այս թիւերը պարզութեամբ և, վեր թերակատարել են թե 1930 թվի աշնան, թե հաջորդ տարվա փետրարի տ. աշնան հալաքի մասնավոր վերջին պլանները, մի դրութիւն, վեր մեր ներկա պայմաններում անհանդուրժելի յե: Նույնը կարելի յե ասել շինողների և խորհրդատեութիւնների վերաբերյալ: Սակայն իրողութիւնը միայն այդ չէ, կատարված աշխատանքները գլուխ են յե-կել հաղար ու մի դժվարութիւններով և այն ել մի շարք վերադաս ու հակիչ մարմինների հետեղական ներգործման միջոցով: Կոնսերվի դործարանի դիրեկցիան մի քանի ամիս շարունակ, ամենախիտ դիմադրութիւն եր ցույց տալիս ֆարգործաւ պարոցի բացմանը, պատճառարանելով բոլորն յու-դումարներ չունենալ և մի շարք նման արգելքներ հարուցե-լով, բայց վերջիվերջո հաղիվ հաջողվեց համոզել նրան: Բանուծի պատրաստման, մատակարարման պլանների կա-տարման վերաբերյալ դիրեկտիվներն այնքան մարտական են ու հրատապ, վեր վոչ մի դիմադրութիւն և պատճառարա-նութիւն չպետք ե հալի առնել: Անհրաժեշտ ե ամեն ջանք թափել և բեկում առաջացնել այդ դործում, չմոռանալով, վեր բանուծի պահապար թերեւ վորոշ ժամանակ մեծանա-լու յե:

Փարգործաւ պարոցների նորմալ աշխատանքներին մեծ խոչնդոտ ե հանդիսանում շինքերի բացակայութիւնը: Յեթե աշխատեալ մեր տնտեսական և համապատասխան շա-հադրողված մարմինները արտակարգ միջոցներ չդիմեն, թեկուզ արտակարգ ֆինանսական հատկացումների և այլն, կվտանգեն հաջորդ տարվա պլանի կատարումը:

ՅիՏ-ի մեթոդական շինարարական բանուծի մասնաշա-կան կարճատե պատրաստումը գլխավորապէս կատարվում ե «Ռեստանովկա» ակցիոներական ընկերութիւն միջոցով, Աշխ. ժողովրդատի մարմինների ղեկավարութեամբ և ոժանդակու-թեամբ: Սկսած 1930 թվի հատուկ յեռամսյակից մինչե հու-նիսի մեկը կատարվել են հետեյալ աշխատանքները (տես №3 աղյուսակը):

ԲԱՆՈՒԺԻ ՊԵՏՐԱՍՏՈՒՄ

«Ունշանովկա» ակց. ընկ. միջոցով առ 1931 թ. դեկ.

նդ. № 3

ՊՐՈՑԵՍԻՆԵՐ	Ըստ Աշխատող-կամառի պլանի	Ավարտողների թիվն առ 25/IX 1931 թ.	Աշխատողի պլանի % 100	Սովորողների թիվը	Ընդամենը	Աշխատողի պլանի % 100
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ						
1. Քարտաշ-վորմնադիր.	3550	3531	99,3	817	4348	122,5
2. Հյուաններ	850	946	111,3	146	1092	129,4
3. Ծխադործներ . . .	200	46	23,0	216	263	131,0
4. Արմ. բետոնշիկներ.	250	196	78,4	—	196	78,4
5. Փակաղաղթ-լըմողի	150	105	70,0	—	105	70,0
6. Վառարանադործներ	25	—	—	—	—	—
7. Ներկարարներ . . .	25	—	—	—	—	—
8. Քար կտրողներ . . .	1000	350	35,0	169	319	51,9
9. Սալահատակողներ .	50	—	—	—	—	—
10. Խնամողներ	200	—	—	—	—	—
11. Աղյուս շարողներ . .	200	63	21,5	—	63	31,5
12. Պիկերիստներ . . .	—	—	—	22	22	—
Ընդամ. շին-բանվոր.	6500	5237	80,6	1370	6607	101,6
13. Բերդադիրներ . . .	150	122	81,3	—	122	81,3
14. Մետաղադործներ . .	200	19	9,5	64	83	41,5
15. Ավտո-աշխատողներ	300	220	73,3	—	220	73,3
Ընդամենը	7150	5598	78,3	1434	7032	98,3

Հիշյալ տվյալները ցույց են տալիս, վոր շինարարական վորակյալ բանուծի պատրաստման համար բավական զգալի աշխատանք է կատարվել և հիմնականում պլանի կատարումն ապահովված է, նույնիսկ գերակատարվել է շին-բանվորների ընդհանուր պլանը: Այն բացարձակ թերակատարումները, վոր կան վորոշ արտադրանքների վերաբերմամբ, տեղի յին ունեցել այն պատճառով, վոր տվյալ արհեստների պահանջից յեղնելով, կատարումը հետաձգված է հետագա կվարտալներին: Իսկ մեկ-յերեքս արտադրանքներում թերակա-

տարման գլխավոր պատճառը մեր տնտեսավարներն են: Որին նաև՝ Մեխանիկական գործարանի դիրեկցիան պլանով նախատեսված 200 մետաղադործների պատրաստման հարցը մոտ յերեք ամիս ձգձգում էր և դիմադրություն ցույց տալիս: Նրա ներկայացուցիչը մի հեղինակավոր նիստում այդ հարցի մասին հայտարարում է «ձեք մեթոդով պատրաստված մարդիկ մեզ պետք չեն, նրանք վորակ չեն ունենա» և այլն: Մինչդեռ այդ կուրսերի կազմակերպման նպատակահարմարությոնը և նրանց ձևն ու մեթոդները քննված են Մոսկվայից սկսած մինչև Յերեսան և չեն կարող կասկածի յենթարկվել: Այս բոլորից հետո դիմադրել մետաղադործների պատրաստմանը, նշանակում է՝ կամ թեթևամտություն մը չգիտակցել բանուծի պատրաստման նշանակությունը, կամ աղտավաղել կուս. դիրեկտիվներն ու ընկնել ոպորտունիզմի ճանհիճը:

Շինարարական բանվորական ուծի պատրաստման ասպարիզում ևս կան հսկայական ու աղաղակող թերություններ: Այստեղ նույնպես ամենադժվարին ինդիքը հանդիսացել է չենքերի ու հանրակացարանների հարցը: Աշխատող-կուստի «Ուստանովկա»-ի գծով միայն հոգացվում են կազմակերպչական և սովորողների թոշակների ծախսերը: Մոսկվայից ստացվող գումարներից 1930 թվի հատուկ կվարտալից առ 1931 թ. դեկտեմբեր ամիսը ծախսված է մոտ 950.000 ռուբլի, իսկ չենքերի, հանրակացարանների վերանորոգման և կառուցման համար վոչ մի կոպեկ այդ գծով չի հատկացված: Այդ պարտականությունները դրված են քաղաքային և գյուղական խորհուրդների ու տնտեսական-չինարարական մարմինների վրա: Այս առթիվ կան վերադաս մարմինների հատուկ վորոշումները: Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի 1930 թվի դեկտեմբերի 22-ի բանուծի հարցի վերաբերյալ վորոշման մեջ նույնպես այդ մասին առաջարկված է հիշյալ մարմիններին ընդառաջել, ապահովել չենքերով, շինանյութերով ու հանրակացարաններով:

Սակայն այդ բոլորը շատ քիչ հետևանքներ են տվել: Միանգամայն անմխիթար և վատթար դրություն մեջ են մտնում այդ չենքերն ու հանրակացարանները: Այս հարցում Յերեսանի քաղխորհուրդը և ուրիշ շատ տեղական խորհրդային մարմիններ մատը մատին չեն խփել և վերին աստիճանի անտարբեր վերաբերմունք են ցուցաբերել:

Սոցիալ դեմոկրատները են հարուցվել նաև չինական թերի և գործիքների մատակարարման հարցում:

Մյուս խոշոր թերությունն այս ասպարիզում՝ պատ-
րաստված բանվորներին իրենց մասնագիտությամբ չուսա-
դործելն էր, վորը 1931 թ. սեզոնի սկզբում մասսայական
բնույթ էր կրում և այժմ դեռ վորոշ չինարարական մարմին-
ներում շարունակվում է: Նրանց պատճառարանություննե-
րից առաջինն այն է, վոր ցիտականները սովորած
բանվորներն են, իբր թե, անսրակ են: Այնինչ ապացույ-
ված է, վոր այդ պատճառարանությունը սխալ է, ցիտա-
կանները հին վորակյալ բանվորներից համարյա յետ չեն
մնում: Մյուս՝ վոչ այնքան բացահայտ պատճառարանու-
թյունը սևագործ բանվորների պակասը ցիտականներով
լրացնելն էր, վոր իրականության մեջ գոյություն ունի:
Այս յերևույթները արդյունք են այն բանի, վոր պատրաստի
բանուժը, փոխանակ ըստ մասնագիտության ոգտադործելու,
դնում են սևագործ աշխատանքի և անուշադրության մատ-
նում հավաքվածքի ման ապարատների ուժեղացման և նորանոր
բանուժ ձեռք բերելու աշխատանքները:

Այդ և նման պատճառներով, վորոնց թվում նաև վո-
րակի համապատասխան աշխատավարձով չբավարարելու
պատճառով այդ բանվորների վորոշ մասը լքեց իր գործը,
անցավ ուրիշ աշխատանքի: Նա դիտավորապես վերադար-
ձավ իր տնտեսությունը և այդպիսով ցրվեց, չնայած այդ
բանվորների կարիքը միշտ էլ շատ է դիպցվում:

Նկատի ունենալով, վոր մենք վորակյալ բանուժի մեծ
պահանջ ունենք, և այն, վոր Զանդեղուրի վերաշինման հա-
մար պլանից դուրս մոտ 3000 վորակյալ բանուժի պահանջ է
դրվում, մյուս կողմից՝ վորպեսզի պետության ծախսած
հսկայական գումարներ չուրը չընկնեն, ՀՍՍՀ Աշխտողկոմա-
տը հատուկ վորոշում է հրապարակել նախկին ցիտականնե-
րին հավաքելու վերաբերյալ: Անկախ այս վորոշումից, պետք
է մեր տեղական կուս., խորհրդային և պրոֆմարմինները
բացատրական աշխատանքների միջոցով ոգնեն, վոր վոչ
մի ցիտական դուրս չմնա մեր չինարարության աշխատանք-
ներից և հետագայումն էլ նման դեպքեր չկրկնվեն:

Մյուս զգալի թերությունները, վոր ունեցել ենք այդ չինա
րարական կուրսերի ընթացքում, մաղումն է այդ, վոր հա-
նում է մոտ 28,6 տոկոսի: Այս դրությունը պետք է վերա-
դրել հավաքի անհաջող կադմին և «Առատանովկա»-ի անմի-

ջական դեկավար կադմակերպչական, կուրսորդատի-
րակչական աշխատանքների թուլության: Անշուշտ այս հար-
ցում, մասնավորապես Փարգործաշրջապրոցների հավաքի դո-
րում Աշխտողկոմատի մարմինները խոշոր թերություններ
ունեն: Անհրաժեշտ է, վոր հետագա հավաքների վրա ամե-
նալուրջ ուշադրություն դարձվի, վոր կուս. և ԼԿՅՍՄ բջիջ-
ներն ու արհմիութենական կոլեկտիվները լայն բացատրա-
կան աշխատանք ծավալեն և, վերջապես, այդ կարևոր հար-
ցի շուրջը անհրաժեշտ հասարակայնություն առաջ բերվի:
Այս միջոցառումները նույնպես անբավարար են, անհրա-
ժեշտ է Աշխտողկոմատին կից պահիտ-տեխնիկական կարի-
ները կադմակերպել և դնել լավ հիմքերի վրա և ամենու
ծրագրային աշխատանք կատարել: Այս լրացուցիչ ձեռնար-
կումներով միայն հնարավոր կլինի հավաքը ճիշտ կատարել
և նախորդ ընտրություն անել, թե ով, վորտեղ լավ կարող
է սովորել կամ իր ընդունակություններով նա վորտեղ ոգ-
տակար կլինի:

Բանուժի պատրաստման հարցում մճռական նշանակու-
թյուն ունի և ակտուալ բնույթ է ստացել կանանց ներգրավ-
ման աշխատանքը: Այստեղ նույնպես կանայք անսպառ աղ-
բյուր են հանդիսանում դատելթացներում վորակավորվելու
տեսակետից: Պետք է աշխատել հետագա դասընթացներում
մաքսիմալ չափով ընդգրկել կանանց ռեզերվները: Մինչև այժմ
համարյա մեր բոլոր կուրսերում կանանց թիվը թերակա-
տարվել է. Փարգործաշրջապրոցներում 50 տոկոսի փոխարեն
1931 թվի աշնան հավաքին յեղել է 8 տոկոս, հաջորդ մե-
տրվարյան հավաքին՝ 20 տոկոս, իսկ չինբանվորների գծով
ավելի խայտառակ պատկեր գոյություն ունի, վորպիսի
դրությունը միանգամայն աննորմալ է: Անշուշտ, այս յե-
րևույթը դիտավորապես արդյունք է կանանց ներգրավումը
թերազնահատելու և մյուս կողմից՝ նրանց մեջ կատարվող
թույլ աշխատանքի:

Սոցիալդային Հայաստանում բավական խոշոր թիվ են
կազմում աղքատյին փոքրամասնությունների աշխատավորա-
կան տարրերը, հատկապես թուրքերն ու յեղիդները, վո-
րոնց պետք է հավաքարկել, վորակավորել և մտցնել արդյու-
նարերության մեջ: 10-րդ կուս. համագումարը աղքատյին
հարցի վերաբերյալ վորոշման մեջ, յեղելով Լենինի ցու-
ցումներից, ասում է.

«Կադմակերպել և զարգացնել թե հանրապետության

և թե պրոֆեսիոնալ - տեխնիկական բնույթի դասը-
թացների լայն ցանց՝ մայրենի լեզվով (առաջին հեր-
թին՝ կերպիչների, բաշկիրների, թուրքմենների, ուզ-
բեկների, տաջիկների, թաթարների, դաղստանցիների
և այլն), վորակյալ բանվորների տեղական կադրերի
պատրաստումն արագացնելու համար»:

Յեթե մեր թուրք և յեղիդ աշխատավորության մեջ դգա
լի աշխատանքներ կատարված են հանրակրթական և վորոշ
չափով պրոֆեսիոնալ տեխնիկական աշխատանքների գծով,
սակայն բանուժի պատրաստման մասսայական կարճատև
դասընթացների կազմակերպման և արդյունաբերության մեջ
նրանց ընդգրկելու հարցում շատ յետ ենք մնացել:

Միութենական Կենտրոնական 3-րդ նստաշրջանը իր
վորոշումով առաջարկում է Աշխտոկոմատին և տնտեսական
մարմիններին՝ «ԽՍՀՄ բանվորական ուժի պատրաստման,
ոգտագործման ու բաշխման ընդհանուր պլանում նախատե-
ռել աղգային կադրերի պարտադիր ներգրավումը արդյու-
նաբերության մեջ և նրանցից վարակալոր բանվորների
ստեղծումը» (ընդգծումը իմն է Վ. Խ.):

Այս խնդրում հետագա մեր աշխատանքները պետք է ըն-
թանան կուսակցության և կառավարության ղերեկտիվների
անչեղ կենսագործման ուղիով:

Մեզ մոտ մինչև 1931 թվի մայիս-հունիս ա-
միսներին միանգամայն անթույլատրելի կերպով զրե-
թե մոռացության են տրված Հայկոմկուսի Կենտ-
րոմի ղերեկտիվները՝ աղգային փոքրամասնություն-
ների մեջ կատարվելիք աշխատանքի, մասնավորա-
պես զանազան դասընթացներում նրանց ընդգրկելու վերա-
բերյալ: Մինչև այժմ յեղած պատկերը թե ֆարգործաչ-
դպրոցներում և թե «Ուստանովկա»-ի դասընթացներում
միանգամայն անմխիթար է և նրանց ընդգրկման տոկոսը
զերոյի և հավասար: Աշխտոկոմատը նորերն է շարժվել
տեղից, գործնական ցուցումներ տվել և հատուկ թվեր ա-
ռաջադրել «Ուստանովկա»-ի գծով աղգային փոքրամասնու-
թյուններից վորակյալ բանվորներ պատրաստելու և այդ ուղ-
ղությամբ առհասարակ ծրագրային աշխատանքներ կատա-
րելու համար:

Դասատուների բացակայության վերաբերյալ և նման
զանազան պատճառաբանություններ, վորոնք իբր թե խան-

գարում են արգային փոքրամասնությունների ընդգրկմանը
սոսկ անհիմն պատճառաբանություններ են:

Պետք է ուժ ու յեռանդ չխնայել, այս խնդիրը միշտ պա-
հել ուշադրության կենտրոնում, և խիստ պլանայնություն
մտցնել, վորի համար խոշոր անելիքներ ունի նաև Պետ-
պլանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՆՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Աշխատանքի պետական սոցիալական ապահովագրու-
թյան մարմինները, բացի այն հսկայական աշխատանքից,
վոր կատարում են բանվորների և ծառայողների նյութա-
կան, կուլտուր-կենցաղային կարիքների բավարարման գծով,
զգալի աշխատանք են կատարում նաև ժողտնտեսությունը
բանուժով ապահովելու ասպարիզում:

Հենց գործադրելության լիկվիդացիայի առաջին որերին
ԽՍՀՄ Աշխտոկոմատի 1930 թվի հոկտեմբերի 9-ի վորոշու-
մից անմիջապես հետո, բոլոր այն միջոցները, վոր իբրև
նպաստ տրվում է յին գործադրելիներին, գործադրելության
լիկվիդացիայի հետևանքով հատկացվեցին բանուժի վորա-
կավորման նպատակին: Միայն Հայաստանում սոցալ մար-
մինների գծով գործադրելիներին տրվում էր տարեկան մոտ
400 հազար ուրլի նպաստ: Դրա ղիմաց միայն 1930 թվի
հատուկ յեռամսյակում սոցալմարմինների միջոցներից
բանուժի պատրաստման համար տրված է 222,161 ուրլի,
1931 թվին այդ նպատակով Խորհրդային Հայաստանին բաց է
թողնված մոտ մեկ միլիոն ուրլի՝ գլխավորապես չինարա-
րական բանվորական կադրեր պատրաստելու համար: Այդ
գումարները տրվում են կենտրոնացված կարգով Միութե-
նական Աշխտոկոմատի գծով:

Բալական խոշոր նշանակություն ունի նաև հաշմանդամ-
ներին և թոշակառուներին ժողտնտեսության մեջ ներգրա-
վելու հարցը, նրանց ըստ իրնց աշխատունակության գործի
դնելը: Նրանք հսկայական կենսաթոշակներ են ստանում
սոցալմարմիններից: 1929-30 տնտեսական տարում թոշակա-
ռուներին տրված է 633.100 ուրլի կենսաթոշակ: Հիմնա-
կանն այս չէ, անհրաժեշտ է թոշակառուների նյութական ող-
նությունն ալիլի և ուժեղացնել, և հենց այդ գիծն էլ առաջ է

տարվում: Մեր բանուժի հսկայական տրակտի պատճառով
անհրաժեշտ է այդ զգալի թիվ կազմող թոշակառուներից աշ-
խատողներին նույնպես դործի դնել: Ահա այս խնդրին
պետք է առանձին ուշադրություն նվիրել: :

Անցյալ 1929/30 տնտեսական տարում դրանց թիվը կոր-
հորդային Հայաստանում համում էր մինչև 1956-ի, իսկ
այժմ իջել է մինչև 1700-ի: 1931 թվի առաջին կիսամյակում
դեռևս դործի յեն ուղարկված 250 հոգի և հանված են թոշա-
կառուների ցուցակից: Թոշակառուների ընդհանուր թվի
35-40 տոկոսը հնարավոր է ուղարկել համապատասխան աշ-
խատանքների և վորոշ մասը հանել թոշակառուների ցուցա-
կից: Մեր սոցալդմարմինները պետք է վերջ տան իրենց դան-
դաղիտուությանը: Կասկածից դուրս է, վոր աշխատանքի ու-
ղարկվող թոշակառուների տնտեսական դրուժյունը չի վա-
տանում, այլ ընդհակառակը՝ լավանում է: Այդ անթիվ կան
միութենական Սոցալ. Կենտրոնացության (№ № 124 և 125)
վորոշումները՝ վորտեղ թոշակառուներին աշխատանքի ու-
ղարկելու մասին առված են՝ «Աշխատանքի ուղարկվող թոշա-
կառուների կենսաթոշակը լրիվ պահպանել, վորոշ դեպքե-
րում բարձրացնել 75 կամ 50 տոկոսով, յեննելով կենսաթո-
շակի և նրա աշխատավարձի չափից»:

Վորպեսզի ավելի արագացվի թոշակառուներին աշխա-
տանքի ուղարկելու դործը, պետք է վերջ տալ նաև նրանց
վորակավորման խնդրում յեղած անտարբեր վերաբերմուն-
քին: Դրա համար աշխատանքի մարմինները պետք է ավելի
աշխուժացնեն իրենց դործունեությունը:

Մեր ներկա սոցիալիստական բուռն վերելքի պայման-
ներում, յերբ մեր առաջ դրված է յերկրի աշխատավորական
ռետուրաների մաքսիմալ ոգտագործման մեծ պրոբլեմը,
հաճմանդամներին ու թոշակառուներին հնարավոր չափով
ոգտագործելու և նրանց սոցիալնարարության մասնակից
դարձնելու հարցը դառնում է այդ մեծ խնդրի լուծման աղ-
դակներէց մեկը: Հա այդ տեսակետից պետք է ամենամի-
նիմալ աշխատանքի ընդունակությունն ունեցող մարդը լծվի
գործի:

ՎԵՐԱՑԵԼ ԲԱՆՈՒԺԻ ՀՈՍՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե այսօր կապիտալիստական հասարակարգում կա-
պիտալիստը բանվորական ուժը դնում է իրրև ապրանք,
բանվորական ուժը միշտ յենթակա յե աճուրդի, կամ այնտեղ
բանվորը մշտապես գտնվում է փողոց չարավելու սպառնա-
լիքի տակ, մեզ մոտ, մեր տնտեսության վիթխարի դարդաց-
ման հետևանքով, սոցիալիստական շինարարությունը լրա-
ցուցիչ միլիոնավոր բանվորական կադրերի պահանջ ունի:

«Առաջ, արդյունաբերության վերականգնման»
չրջանում, յերբ մեր տեխնիկական սարքավորումը
բարդ չէր և արտադրության մասշտաբը փոքր էր,
կարելի յեր մի կերպ հանդուրժել բանվորական ուժի
այսպես կոչված՝ հոսունությունը: Այժմ բանն ուրիշ
է: Այժմ իրերի դրուժյունն արմատապես փոխվել է:
Այժմ, ծավալուն վերակառուցման շրջանում, յերբ
արտադրությունը հասել է վիթխարի մասշտաբի, իսկ
տեխնիկական սարքավորումը դարձել է վերին աստի-
ճանի բարդ, բանվորական ուժի հոսունությունը մեր
արտադրության համար դարձել է մի չարիք, վոր
կազմավորւծում է մեր ձեռնարկությունները»:

(ՍՍԱԼԻՆ)

Հենց դրա համար այսօր բանուժի հոսունության դեմ
սլայքարելու հարցը մեզ մոտ դարձել է հրատապ ու մարտա-
կան խնդիր: Մեր արդյունաբերության ընդարձակման ու
դարդացման հետ միասին, գաղտնիք չէ, վոր դործադրվու-
թյան իսպառ վերացումից հետո մի շարք սրտաճառներով,
ինչպես որինակ՝ աշխատավարձի «ձախ» հավասարեցումը
վորոշ ասպարեզներում, բանվորության մի մասի կույա-
կենցաղային պայմանների թույլ բավարարումը և այլն,
կենցաղային պայմանների թույլ բավարարումը և այլն,
զգալի չափով ավելացրեց հոսունությունը: Հոսունությունն
ամենից շատ նկատվում է յերիտասարդ, դյուղից նոր յեկած
մանր սեփականատիրական տրադիցիաներով ու սովորու-
թյուններով լի տարրերի մեջ: Մեր բանվորական հիմնական
կադրերը, վորոնք ունեն տարիների և տասնյակ տարիների
ստաժ, անչափ հոսունություն ունեն, չնայած դեռ շատ տե-
ղերում, բանաժառանգարման, բնակարանային և նման այլ
խնդիրներն անկախոն վիճակի մեջ են:

Մեր արդյունաբերության առանձին ոլակներում խրջված են միջ միայն դասակարգային թշնամու դիտարկման հետևանքները և պայքար են մղում մեր դեմ, այլև մեր արդյունաբերության մեջ կան նրա կաշառված «բանվոր» ներկայացուցիչները՝ բուրժուական կուլակային տարրերի ադենտները: Սրա վրա պետք է ավելացնել արդյունաբերության մեջ նոր ընդգրկված, դեռ հետամնաց, մանր բուրժուական սովորություններով լի խավերին, վորոնք դեռ մեր ձեռնարկներին նայում են իբրև դուրսից ու հարստահարելու միջոցի: Ինչպես ասում է մեր մեծ ուսուցիչ Լենինը՝ «այն մի բուռն բանվորներն ու խավերը, վորոնք համառ կերպով հետևում են կապիտալիզմի տրագիկաներին ու սովորություններին, և շարունակում են նայել Սորհրդային պետության վրա՝ առաջվա պես՝ տալ «նրան» ավելի քիչ, ավելի վատթար աշխատանք և «նրանից» ավելի շատ փող գլխի»:

Հոսունության դեմ պայքարը միաժամանակ քաղաքական պայքար է: Անշուշտ, այդ կատեգորիաների «բանվորների» քանակը շատ աննշան է, սակայն նրանց հենց իրենց կողմից աշխատող բանվորության շահերն և պետության հասցրած վնասը մեծ է: Յուրաքանչյուր գործալիք, պարապորդ, ղեպի պետական գույքն ու գործիքներն անխնամ վերաբերվող աշխատավոր միջ միայն իջեցնում է արտադրողականությանը, բարձրացնում է ինքնարժեքը, դրոշմ է աշխատանքի դիսցիպլինան, այլև աշխատելու է հսկայական թիվ կադմոդ յերիտասարդ նոր բանվորությանը և վնասում է սոցմրցման ու հարվածայնության մեծ գործին, և, վոր գլխավորն է, նա վերջին հաշվով ողնում է մեր դասակարգային թշնամուն և ջուր է լցնում աջ և «ձախ» ոպորտունիզմի ջրողացին: Միայն համար պետք է մեր պայքարն առաջին հերթին արհմիությունների և մյուս մարմինների կոստուդուն աշխատանքների միջոցով և՛ ավելի ուժեղացնել:

Մեր արդյունաբերությունը չարամտորեն վնասողներին, սոցիալիստական շինարարության զարգացման տեմպերը դանդաղեցնողներին պետք է պրոլետարական անողոր հարվածներ տալ առնել և լիովին կենսագործել Համամիութենական Կոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 3-ի մարտական ու վճռական դիրեկտիվը:

Ձեռնարկություններում բանուծի հոսունության

դեմ պայքարելու նպատակով, կիրառել բանվորներին արտադրության ամբողջությամբ ձեռնարկմանը մի սխառն, դարգացնելով պրոլետարական համապատասխան հասարակայնություն, մտցնելով բանվորների ինքնապարտավորումն պրոլետարական հասարակայնության առաջ՝ տվյալ ձեռնարկության մեջ վորոշ ժամանակամիջոցում աշխատելու համար և կիրառել հասարակական ներգործման բոլոր միջոցները, մինչև իսկ բոլորի լինթարկելով արտադրության չարամիտ դասակարգներին, ինչպես նաև սահմանելով սարգեվատրման ու մատակարարման աշխատի ձևեր, վորոնք դրոշմ են բանվորներին յերկար ժամանակ մնալու տվյալ գործարանում»:

Հարց է ծագում, թե արդյուք, այդ վերին աստիճանի վճռական նշանակություն ունեցող խնդրի շուրջը լայն հասարակայնություն ստեղծված է, կամ Համ.Կ(բ)Կ կենտկոմի հոկտ. 20-ի մարտական հայտնի դիրեկտիվի կենսագործմանը գործնականապես ձեռնարկել են մեր համապատասխան մարմինները: Պատասխանն այնքան էլ դրական չէ, քանի վոր բանուծի հոսունության դեմ պայքարելու հարցում մեր հաջողությունները դեռ չափազանց աննշան են:

Հիմնական նշանակություն ունեն բանուծի հոսունության ձիշտ հաշվառման աշխատանքները, առանց վորի դժվար է նրա դեմ հաջող պայքար մղել: Դժբաղտաբար մինչև այժմ այդ գործը դեռ անկանոն դրության մեջ է: Այս հարցում անելիքներ ունեն նաև Միութենական Ֆեդերատիվ խորհ. տնտ. մարմինները: Նույնիսկ մինչև այժմ բանուծի հաշվառման միասնական ձև գոյություն չունի:

Մեր առաջ հսկայական պարտականություններ են դնում Համկոմկուսի հոկտեմբերի 20-ի վորոշումը, ինչպես նաև Համամիութենական Կենտգործկոմի և Ժողովրդխորհի 1930 թվի դեկտեմբերի 15-ի և Աշխտողկոմատի հունվար 4-ի վորոշումները՝ բանուծի ուսցիոնալ ոգտագործման, արդյունաբերություն ամրացնելու, բանուծի հոսունության դեմ պայքարելու և այլ ձեռնարկումների մասին: Մեր աշխատանքների հանրագումարից պարզվում է, վոր մենք դեռ չոչափելի արդյունքներ չունենք այդ ուղղությամբ: Վատ են կիրառվել սոցմրցմամբ ու հարվածայնորեն աշխատող լավագույն բանվորներին արտոնություններ տալու դիրեկտիվները:

1929-30 տնտեսական տարում մեր արդյունաբերական, չինարաբական և այլ խմբերի բանուժի հոսունություն մասին յեղած տվյալներից յերևում է, վոր միանգամայն անմխիթար գրույթյուն գոյություն ունի, արդյունաբերություն մեջ ընդունվել է 9291 բանվոր, արձակվել է 7015 հոգի կամ 80,2 տոկոս հոսունություն և տեղի ունեցել: Շինարարության մեջ ընդունվել են 16,346 հոգի, արձակվել են 15,225 հոգի: Յեթե 1930 տնտեսական տարվա առաջին կիսին արդյունաբերության մեջ բանուժի ամսական միջին հոսունությունը հասնում է 6,4 տոկոսի, ապա հաջորդ տարվա կիսամյակում այն հասնում է 10,2 տ. կամ ամբողջ կիսամյակի 61,2 տոկոսին: Ահա այն ազդակող թվերը, վորոնք պետք է մեր ուշադրության առանցքը հանդիսանան բանուժի հոսունության դեմ պայքարելու դործում:

Բանվորական կադրերին ձեռնարկությունն ամրացնելու, ավելի մնալուն դարձնելու և նրանց ռացիոնալ կերպով ուղտադործելու հարցն այսօր մեզ համար ավելի լուրջ, ավելի դժվար հարց է դարձել, քան նոր բանուժ գտնելու: Գեմ աս խնդրում ընալ պատահական չէ, վոր ընկ. ՍՍՍՍԽՆԸ 1931 թվին տնտեսավարների խորհրդակցությանն արտասանած իր պատմական ճառում այս հարցին կարևորագույն նշանակություն է տալիս, կանգ առնելով հատկապես աշխատավարձի խնդրի վրա:

«Նրանք, բանվորների այդ առաջատար խմբակները, կազմում են արտադրության հիմնական ողակը: Ամրացնել նրանց ձեռնարկությունը, դեխին, նշանակում է՝ ամրացնել բանվորների ամբողջ կազմը, հիմքից կասեցնել բանուժի հոսունությունը: Իսկ ինչպե՞ս ամրացնել նրանց ձեռնարկությունը: Նրանց կարելի չէ ամբողջել, և իմիպես առաջ քաշելու դեպքի վեր, քառձրացնելով նրանց աշխատավարձի մակարդակը, կազմակերպելով աշխատավարձն աչպես, վոր արժանի գնահատություն տրվի աշխատողի փորակալորմանը: Իսկ ի՞նչ է նշանակում առաջ քաշել դեպի վեր, բարձրացնել նրանց աշխատավարձի մակարդակը: Այդ, բացի մյուս բոլորից, նախատեսվում է հետևյալ բանալ փոփոխակալ կալ բանվորների առաջ խթանել նրանց գեպի վեր ընթանալու, փորակալների կարգն անցնելու»:

Կառավարության միջոցներից ամեն տարի հսկայական գումարներ է բաց թողնվում բանվորության, տնային հեր-

թին՝ ցածր վարձատրվողների աշխատավարձը բարձրացնելու համար, սակայն մեզ մոտ այդ առարկայում մինչև այժմ բավարար չափով կազմակերպված աշխատանք չի կատարվել, փոխանակ աշխատավարձի բարձրացումը բղխեցնելու բանվորի աշխատանքային պայմաններից ու արտադրանքի վորակից, յերբեմն մեխանիկորեն «ձախ» հավասարեցման գիծ է տարվել, վորը բացասական ազդեցություն է թողել աշխատանքի արտադրողականության բարձրացման, բանվորներին արդյունաբերությանն ամրացնելու, մշտական ու հարաձուռն վորակալ կադրեր ստեղծելու, բանվորների կուլտուրական օլաթմանների ել ավելի բարելավման, ինչպես նաև արդիինպլանների կատարման վրա: Սչինչ այժմ աշխատավարձը ամենաբավ դործոններից մեկը պետի հանդիսանա ու ոժանդակի աշխատանքի արտադրողականության բարձրացման և հենց դրա համար էլ՝

«Պետք է վերացնել հավասարեցումը պետք է կազմակերպել դրույքների այնպիսի սխեմա, վոր նկատի առնվեն վորակալ և վոչ վորակալ աշխատանքի, ծանր և թեթև աշխատանքի տարբերությունը» (ՍՍՍՍԽՆ):

Պետք է վերանայնել, վերակառուցենք աշխատավարձի սխեման մեր սոցչինարարության ներկա պահանջներին համապատասխան՝ ուժեղ պայքար մղելով սոցիալական և հարվածայնության, աշխատանքի արտադրողականության բարձրացման խոշոր նշանակություն, ալ սպորտունիտական թևաբաղահատման և «ձախ» հավասարումների դեմ:

Աշխատավարձի հավասարեցման բազմաթիվ փաստեր կան մեզ մոտ: Կարբիտի դործարանում հյուսնր ստանում է 59 ուրբլի, իսկ պահեստի բանվորը՝ 69 ուրբլի, կիր կրող բանվորն՝ 99 ուրբլի: Ոճառի դործարանի չորանոցում ոճառ դարձող բանվորն որական ստանում է 2 ո. 44 կ: իսկ մամլի՝ մեքենայի վրա աշխատող բանվորը՝ 2 ո. 31 կ: ավելի պակաս, քան ստանում է ցրիչը: Կոնսերվի դործարանում սեւադործ բանվորն ավելի բարձր աշխատավարձ է ստանում քան արտադրության մեջ աշխատող բանվորը և այլն:

Աշխատավարձի հարցում պետք է մեր ուշադրության կենտրոնը դարձնել Համկոմկուսի հոկտեմբերի 20-ի դիրեկտիվը, վորի մեջ ասված է «... Միտեսակ վորակ ունեցող բանվորների աշխատավարձի այլոգանությունը վերացնել ինչպես միևնույն ձեռնարկության, այնպես էլ տարբեր ձեռնարկությունների մեջ»: Այս առարկայում նույնպես մեր

ճախարձի այս ձևի դեպքում ստացվում է հետևյալ պատկերը՝

Դիցուք բանվորն արտադրել է 65 կտոր։ Առդրակի դորժախարձի դեպքում նա կստանա $8 \text{ կ.} \times 65 = 520 \text{ կ.}$ մինչդեռ պրոդրեսիվ դեպքում նա կստանա $8 \text{ կ.} \times 50 = 400 \text{ կ.}$ և $15 \times 13 = 195 \text{ կոպեկ}$ ։ Ընդամենը՝ 520 կ. փոխանակ ուղղակի դորժախարձի դեպքում ստանալիք 520 կոպեկի։

Յեքիկորդ ձևի դեպքում բանվորը պլանային աշխատանքի արտադրողականության առաջադրանքը դերակատարելով ստանում է պրոդրեսիվ—աճող հատավճարով փոչ թե միայն արտադրածի դերակատարած մասի, այլ ամբողջ արտադրանքի համար, ընդ վերում յեթե նա դերակատարել է իր առաջադրանքը 20 տոկոսով, նույն 20 տոկոսով աճում է և նրա ամեն արտադրածի հատավճարը։ Որինակ՝ բանվորի նորման է 50 կտոր, իսկ նա արտադրել է 60 կտոր, այսինքն 20 տոկոսով ավելի։ Ուրեմն ըստ այս ձևի, նա կստանա ամեն մի հատի համար փոչ թե 8 կ. այլ 20 տոկոսով ավելի, այսինքն 9,6 կոպ. այսպիսով՝ 60 կտոր արտադրելու դեպքում նա ուղղակի դորժախարձի ժամանակ ստանալիք 8 կոպ. $\times 60 = 480 \text{ կոպ.}$ փոխարեն կստանա $9,6 \times 60 = 576 \text{ կոպեկ}$ ։

Այս յերկու ձևերից ավելի նպատակահարմարն է համարվում առաջին ձևը։

Պրոդրեսիվ դորժախարձը ճիշտ կազմակերպելու հետևանքով Խորհրդային Միության մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում ստացվել են խոշոր արդյունքներ։ Մեզ մոտ յեթե այսոր Դափանի ու Ալլահվերդու պղնձահանքերը մոտենում են իրենց պլանների կատարման, այդ խոշոր չափով պետք է վերագրել հանքահանության աշխատանքներում պրոդրեսիվ սխեման կիրառման։ Ալլահվերդում պրոդրեսիվ սխեման կարճ ժամանակամիջոցում տվել է դրական արդյունքներ։ Այսպես, որինակ հանքը ձեռքով դուրս կրելու աշխատանքներում այդ սխեման չնորհիվ՝ մի բանվորի արտադրողականությունը միջին հաշվով որական 2,8 տոկոս վազոնետկայից հասել է 4,2 վազոնետկայի, այսինքն աճել է 50 տոկոսով, իսկ դրա հետ միասին բանվորների աշխատավարձն աճել է 34,6 տոկոսով։

Այնտեղ, վերտեղ վորոշ պրոֆեսիաների վերաբերյալ հնարավոր չե և գծվար ե կիրառել պրոդրեսիվ սխեման, որի-

